



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ  
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

2014թ ապրիլի 28

N 42-Ա

**ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ  
ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի N  
159-Ա, 2012 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 8-Ի N 57-Ա ԵՎ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-Ի  
N 73-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐԳՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի «բ» կետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 2013 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 1032-Ա հրամանի պահանջները **որոշում եմ.**

**1. Հաստատել՝**

- 1) արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի բնակչության պաշտպանության պլանը համաձայն N 1 հավելվածի.
- 2) «ՀԱԷԿ-ի միջուկային և (կամ) ճառագայթային վթարի դեպքում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի բնակչության պաշտպանության պլանը»՝ համաձայն հավելված 2-ի
- 3) «Ուժեղ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի բնակչության պաշտպանության պլանը»՝ համաձայն հավելված 3-ի
- 4) «Քիմիական վտանգավոր օբյեկտների վթարի դեպքում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի բնակչության պաշտպանության պլանը»՝ համաձայն N 4 հավելվածի.
- 5) «Ջրամբարի պատվարի փլուզման սպառնալիքի և փլուզման դեպքում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի բնակչության պաշտպանության պլանը»՝ համաձայն N 5 հավելվածի.
- 6) «Խոշոր հրդեհապայթուցումներում օբյեկտների վթարի դեպքում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի գործելու պլանը»՝ համաձայն N 6 հավելվածի.
- 7) «Գարնանային վարարումների, ջրհեղեղների և սելավի դեպքում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի գործելու պլանը»՝ համաձայն N 7 հավելվածի.
- 8) « Ձնաքի ժամանակ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի գործելու պլանը»՝ համաձայն N 8 հավելվածի.

- 9) «խոշոր անտառային հրդեհների առաջացման դեպքում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի գործելու պլանը»՝ համաձայն N 9 հավելվածի:
- 10) «Կոմունալ-էներգետիկ ցանցերում խոշոր վթարի դեպքում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի գործելու պլանը»՝ համաձայն N 10 հավելվածի:
- 11) «Թուխմանուկի պոչամբարի պատվարի փլուզման դեպքում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի գործելու պլանը»՝ համաձայն N 11 հավելվածի:
- 12) «Համաճարակների դեպքում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի գործելու պլանը»՝ համաձայն N 12 հավելվածի:»

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2010 թվականի դեկտեմբերի 15-ի N 159-Ա, 2012 թվականի օգոստոսի 8-ի N 57-Ա և 2012 թվականի սեպտեմբերի 26-ի N 73-Ա որոշումները:

3. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Արագածոտնի մարզային փրկարարական վարչության պետին՝

1) կազմակերպել սույն որոշման համապատասխան հավելվածներում ճշգրտումներ հունվարի 1-ի դրությամբ և ճշգրտմանը ներգրավել բոլոր շահագրգիռ մարմիններին, իսկ անհրաժեշտության դեպքում նախապատրաստել փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշման նախագիծ:

2) մինչև յուրաքանչյուր տարվա ապրիլի 1-ը ճշգրտված տարբերակը առաքել ընդգրկված մարմիններին:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը ընել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարարական ծառայության Արագածոտնի մարզային փրկարարական վարչության պետ, փրկարարական ծառայության գնդապետ Շ.Շամիրյանի վրա:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:

